

Մ Ա Ս Ի Ս Լ Բ Ա Գ Բ Ո Յ

ԵՐԿՈՂՇԱԲԻ 6 ՅՈՒԼԻՍ 1870

10 ՓԱՐԱ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՅՈՒԼԻՍ

Էրէկ վեհ. Սուլթանն արքունի պալատը կանչեց մեծ Եպարքոսը, պատերազմի պաշտօնեայն եւ Սէրտար— Էքրէմ Էօմէր փաշան, եւ երկու ժա— ֆու չափ խոյ հրդակեցեցու անոնք հետեւը կարծուի որ այս խորհրդակցու— թիւնը Գաղղիոյ եւ Բրուսիոյ մէջ ծա— դած պատերազմին ըստ է։

Բ. Դուսը՝ պատերազմին ընդհան— րանալուն հաւանականութիւնը նկատե— լով, պէտք եղած զգուշութեանց մի— ջոյներն այժմէն ձեռք առնուլ սկը— ւած է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

Փարիզ 16 յուլիս

Օրէնսդիր ժողովն երէկ իրիկուանըս— տին մէջ հետեւեալ որոշմունքն բրաւ։

Տէրութեան դանձկն 50 միլիոն ֆր— րանք պատերազմի պաշտօնատան եւ 15 միլիոն ֆրանք ալ ժողովին զործոյ պաշ— տօնատան արուիլ։

Հարժուն պահապան զինուորները ծա— ռայութեան կոչել։

Կամաւոր զինուորադուրթեան հրահան— տալ որչափ ժամանակ որ պատերազմը տեւէ։

Փարիզ 16 յուլիս իրիկուն

Ծերակոյտն այսօր պիտի ընդունի եւ Կաստատէ Օրէնսդրական ժողովին երէկ իրիկուն ըրած որոշմունքը եւ յետոյ պա— տերազմի յայտարարութիւնն ամեն տէրու— թեանց պիտի զրկուի։

Մեծ ջանքեր կըլլան պատերազմը Գաղղիոյ եւ Բրուսիոյ մէջ ամփոփելու, որովհետեւ Գերմանիոյ մնացեալ մասերն այս վեճին մէջ բռնուած չեն։

Այսօր պաշտօնէից խորհուրդ եղաւ Սէն Բլուի պալատը, Զինուորական պատրաս— տութիւններն ամեն տեղ ջերմ եռանդով տեսնել կը տարուին թէ զօրաց եւ թէ

ժողովրդեան կողմէն։

Կը հաւատան թէ կայսրն այսօր վա— ղը բանակը պիտի երթայ։

Փարիզ 16 յուլիս իրիկուն

Մասնաւոր անդեկուրթիւններէ կիմաց— ուի որ Բրուսիոյ լանտի մօտէն Գաղ— զիոյ չուղ մտեր են, բայց քիչ մ'եղբը Բը— րուսիոյ հոլը զարձեւր են։

Պէրլին 16 յուլիս

Քաղաքն հոս հաւաք եւ ջերմ հա— մակրութեամբ ընդունեցաւ Պատերազմա— կան ցոյցեր եղան։

Փարիզ 16 յուլիս իրիկուն

Ծերակոյտի ժողովը միաձայնութեամբ ընդունեց Օրէնսդրական ժողովին ըրած որոշմունքը։

Պ. Ռուէ խնայուց թէ Բրուսիոյցի Գաղ— զիոյ հոլը մտան։

Փարիզ 17 յուլիս առաւօտ

« Դրակուսին անդամներն երէկ կոյ— տեր ներկայանալով, կայսրն անոնց հայ— բնասիրական եռանդէն շնորհակալ ըլլա— լէ ետեւ տեղեցոյ. « Ամեն անգամ որ Գաղղիոյ մեծ շահերն ու պատկը պաշտ— պանել պէտք ըլլայ, ճերակոյտն ազգու— ձեռնառուութիւն գտնելուս զայ տարա— կոյս չունիմ. Ծանր պատերազմի մը ձեռք կը զարնենք. Գաղղիա իր ամեն զաւակաց զործայցութեանը պէտք ունի. շատ դո՛ւ եմ որ հայրենասիրական տոաջին աղաղա— կը ծերակոյտն զուրս կ'ընէ. այդ աղա— ղակը բոլոր երկրին մէջ պիտի հնչէ. «

17 յուլիս առաւօտ

Յուլիս 16 հրամանագրով երէք առա— ջին զօրաբանակաց ազգային պահապան զինուորներն անմիջապէս պիտի դու— մարուին։

Պաշտօնական լրագիրը սուտ կը հանէ բրուսիոյցեց թիւնովիլ մօտ Գաղղիա մըտ— նելուն լուրը։

Երէկ իրիկուն Փարիզի մէջ պատե— րազմական նոր ցոյցեր եղան Մարսէյէնդ երգելով եւ կիցցէ կայսր զոչելով։

Պրիւսէլէն եւ Լանչէյն եկած հեռագ— րաւորները կը ծանուցանեն թէ Պէրլինցայի եւ Զոլանտայի չէզոքութիւնն ամուր պա—

հելու համար զինուորական պատրաստու— թիւններ կըլլան։

Մունիխ (Պալիէրա) 17 յուլիս

Պալիէրայի թագաւորը՝ հարաւային Գեր— մանիոյ զաշնակցութեան հիւսիսային հետ միաբանելու առիւն եկած նկատելով Բը— րուսիոյ հետ միանալու որոշումը բրաւ, եւ այս երկու տէրութեանց զօրաբանակ— ներուն զործակցութիւնն անմիջապէս պիտի սկսի։

Փարիզ 17 յուլիս իրիկուն

Պատերազմի յայտարարութիւնն այս իրիկուն Պէրլին պիտի զրկուի։ Համայն Գաղղիոյ մէջ զընկնները սատարի վստահու— են։ Բրուսիոյցիք քիչ չի կամուրջը քան— դեցին։ Քաղկեդէն եկած լուրերը կը ծա— նուցանեն թէ Բրուսիոյ զորքերը շարժա— կան վիճակի մէջ զրուիլ սկսան։

Հոովմէն հեռագրով լուր կուտան թէ թէ Պալիս անսխալութիւնն երէկ վը— առեր է 450 այս քուէով 88 կալսկոյս ոչ քուէ տուեր են, 62 ալ պայմանով ըն— գուներ են։

Չինաստանի գէլֆին մայրաքաղաքին մէջ Գաղղիոյցի ջարդուած ըլլալուն լու— րը սուտ հանուեցաւ Օրէնսդրական ժողո— վին մէջ։

ՅՈՒՆՏՈ

Լոնտոն 16 յուլիս

Յժ. Քանա. բաց.—

Դոյց —

Փարիզ 16 յուլիս

» Քոնս. բաց 42

» » զոյ 41,75 (անուանով)

Փոխ. Ում. 1865ի 305

» » 1869 280

Ում. Գաղղ. 65 60—66 40

» Խաւ. բաց 48—48,50

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ